# ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՏՑԱՆՈ» (ՍԱՔԱՐԹՎԵԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 7 - 8 (16305) ՇԱԲԱԹ, 7 ՓԵՏՐՎԱՐԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՄՈՏ

## ԿՄՇԱԿՎԻ ԲԱՐՁՐԱԼԵՌ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾ

### ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՆԱԵՎ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻԻ ԵՎ ՔՎԵՄՈ ՔԱՐԹԼԻԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԵՐ ԱԿԱԿԻ ՄԱՃՈՒՏԱՁԵՆ ԵՎ ՊԱԱՏԱ ԽԻՁԱՆԻՇՎԻԼԻՆ



*Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին փետրվարի 4-ին աշխատանքային հանդիպում ունեցավ տարածաշրջանների պետական լիազոր-նահանգապետերի հետ:*

Հանդիպմանը քննարկվել են տարածաշրջաններում ընթացքի մեջ գտնվող տնտեսական եւ ենթակառուցային նախագծերի հարցը: Նահանգապետերը կառավարության ղեկավարին տեղեկատվություն հանձնեցին երկրամասերում առկա իրավիճակի եւ առաջիկա ծրագրերի մասին: Վարչապետը նահանգապետերին հանձնարարեց առավելագույնս աջակցել տարածաշրջաններում արտադրությունների զարգացմանն ու բնակչությանը հուզող հիմնախնդիրների կարգավորմանը:

Հանդիպման ավարտից հետո, Վրաստանի վար-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳՈՐԾԱԴԻՐ

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՀՆԱՐԱՎՈՐԻՆԸ ԿԱՆԵՆՔ, ՈՐՊԵՍԶԻ 2015-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԼԻՆԻ ԱՌԱՎԵԼ ՀԱՋՈՂԱԿ»

*Ընթացիկ տարվա համար երկրի տնտեսական զարգացման գործում առկա դժվարությունների, տնտեսական աճի ցուցանիշների մասին ներկայացված կանխագծման իր մեկնաբանությունում, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ հնարավոր ամեն ինչ կանի, որպեսզի 2015 թվականը Վրաստանի համար լինի առավել հաջողակ:*



Վարչապետի պարզաբանմամբ, երկրի կառավարությունը գործում է նախօրոք մշակված ծրագրի համաձայն, թեպետ տնտեսական առաջընթացը կախված է նաեւ արտաքին գործոններից: «Դեռեւս երկու տարի առաջ անի-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՕՐԵՆՍԴԻՐ



## ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԿԸՆԴՈՒՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

*Վրաստանի խորհրդարանի մեծամասնությունը, որը ներկայացված է «Վրացական երազանք» կառավարող կոալիցիայի անդամներով, որոշել է երկրի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլուն չներկայացնել Վրաստանի Գերագույն դատարանի նախագահի նոր թեկնածուին:*

Այդ մասին հայտարարել է խորհրդարանական մեծամասնության լիդեր Դավիթ Սագանելիձեն:

Ավելի վաղ, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հայտարարել էր, որ սպասում է Գերագույն դատարանի նոր ղեկավարի թեկնածուների առաջադրում, որից հետո ներկայացված ցուցակը քննարկելու էր իրավասու հանձնաժողովը: Ավելին, նախագահը հանդիպումներ անցկացրեց ոչ կառավարական կազմակերպությունների ու քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ, եւ կողմերը կանխագծել էին այն չափորոշիչները, որոնց համապատասխանելու են առաջադրված թեկնածուները:

«Բոլորը կարծում էին, որ մենք կփորձենք թեկնածուին ընտրել՝ ելնելով քաղաքական շարժառիթներից: Սակայն, մեծամասնությունը հրաժարվում է ներկայացնել թեկնածուին եւ, հավանաբար, դա ճիշտ քայլ է, քանի որ վերջին հաշվով, հարցը լուծվելու է մեր կողմից: Մեր կողմից թեկնածուի առաջադրումը սխալ է, որովհետեւ դա նշանակում է, որ մենք կհրաժարվենք քննարկել այլ թեկնածուների հարցը»,- հայտարարեց Սագանելիձեն:

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

## ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԱԼՅԱՆՍԻ ՀԵՏ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԸ

*Փետրվարի 4-ին, Բրյուսելում, ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում, Վրաստանի պաշտպանության նախարար Մինդիա Ջանելիձեն ու ալյանսի գլխավոր քարտուղար Ենս Ստոլտենբերգը քննարկեցին Վրաստանի եւ ՆԱՏՕ-ի միջեւ երկկողմ համագործակցության, առաջիկա համատեղ ծրագրերի իրականացման հարցը:*



Առանձնակի ուշադրություն հատկացվեց Ուելսի գագաթաժողովում Վրաստանին տրված փաթեթի իրացման հետ կապված հարցին: Պաշտպանության նախարարի հայտարարությամբ, ՆԱՏՕ-ն հնարավորինս աջակցում է վերոնշյալ փաթեթով նախատեսված միջոցառումների կատարման հարցում, եւ դա վրացական կողմի համար առաջնային նշանակություն ունի: Հանդիպմանը քննարկվեցին նաեւ տարածաշրջանային անվտանգության

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

## ԸՆԴԳԾՎԵՑ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

*Փետրվարի 5-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ Եվրամիության դիտորդական առաքելության (EUMM) նոր ղեկավար Կեստուտիս Յանկաուսկասի հետ:*



Հանդիպմանը, որը կրում էր ծանոթության բնույթ, ընդգծեց Վրաստանում առաքելության իրականացման կարեւորությունը: Կողմերը նաեւ առնչվեցին Ռուսաստանի եւ բռնազավթված տարածաշրջանների միջեւ, այսպես կոչված, դաշնակցության եւ համագործակցության մասին համաձայնագրի թեմային: «Հանդիպմանը մենք միմյանց ներկայացրինք Վրաստանում եւ Վրաստանի շուրջ զարգացող իրադարձությունների եւ անվտանգության հարցերի մեր տեսակետը: Մենք պատրաստակամություն հայտնեցինք շարունակել տեղերում մոնիտորինգի առաքելությունը եւ ապահովել վարչական սահմանագծի երկայնքով ապրող բնակչության անվտանգությունը»,- հանդիպումից հետո հայտարարեց Կեստուտիս Յանկաուսկասը:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

## ՆՈԴԱՐ ԽԱԴՈՒՐԻ. «ԵՐԿՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆՈՒՄ Է ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԸ»

*Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին, մեկնաբանելով դրամական քաղաքականությունը խստացնելու վերաբերյալ Ազգային բանկի որոշումը, հայտարարեց, որ երկրի դրամական քաղաքականությունը սահմանում է Ազգային բանկը, եւ դա նրա էքսկլյուզիվ իրավունքն է:*



Նախարարի խոսքերով, ֆինանսների նախարարությունը հնարավորինս օգնում է Ազգային բանկին դրամական քաղաքականության իրականացման հարցում: «Ակնհայտ է, երբ մենք խոսում ենք տնտեսական քաղաքականության դրամական եւ ֆինանսական համակարգման մասին, ֆինանսների նախարարությունն ու Ազգային բանկը գործում են պայմանավորվածությամբ: Մենք աջակցում ենք լարիի ամրապնդմանը, այսինքն՝ օգնում ենք Ազգային բանկին դրամական քաղաքականության նպատակներին հասնելու գործում»,- ասաց Նոդար Խադուրին:

Անդրադառնալով լարիի փոխարժեքի տատանումներին՝ նախարարը նշեց, որ այն կապված է

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՉՀԱՐԿԱԴՐՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՎԵՐԱԴԱՐՁՈՒՄԸ ԿՍԿՍՎԻ ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ

*Չհարկադրվող նվազագույնը պահանջելու մասին հռչակագիրը կարելի է ներկայացնել ընթացիկ տարվա ապրիլի 1-ից մինչեւ սեպտեմբերի 30-ը: Հռչակագրի ներկայացման ընթացակարգը չի փոխվել:*

Ինչպես անցյալ տարի, հռչակագիրը կարելի է ներկայացնել էլեկտրոնային մեթոդով, եկամուտների ծառայության կայքի միջոցով, ինչպես նաեւ եկամուտների ծառայության սերվիս կենտրոններում ու կոմերցիոն բանկերում: Հռչակագիրը ներկայացնելուց առավելագույնս երեք ամսվա ընթացքում քաղաքացիներն իրենց կողմից նշված բանկային հաշվի վրա կստանան չհարկադրվող նվազագույնի համապատասխան գումարը:

Եթե 2014 թվականին քաղաքացիների եկամուտը կազմել է 6 հազար լարի, այսինքն՝ արդեն ստացել են 4800 լարի, ապա պետությունը նրանց վերադարձնում է 360 լարի: Եթե քաղաքացին առձեռն ստացել է 1800 լարիից պակաս, ապա նրան վերադարձվում է այն գումարի 20 տոկոսը, որն ստացել է աշխատավարձի տեսքով:

Նշենք, որ 2014 թվականին չհարկադրվող նվազագույնի տեսքով 460813 քաղաքացիների վերադարձվել է 128354332,712 լարի:

ԳՈՐԾԱԴԻՐ

# ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՀՆԱՐԱՎՈՐԻՆԸ ԿԱՆԵՆՔ, ՈՐՊԵՍԶԻ 2015-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԼԻՆԻ ԱՌԱՎԵԼ ՀԱՋՈՂԱԿ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նարին էր կանխագծել, որ Ուկրաինայում կսկսվեր պատերազմ, կլիներ տնտեսական ճգնաժամ, ու կծագեին լուրջ հիմնախնդիրներ: Մենք հնարավորինը կանենք, որպեսզի ընթացիկ տարին Վրաստանի համար լինի առավել հաջողակ, թեպետ կան մեզանից անկախ արտաքին գործընկերներ, որոնք նշանակալի ազդեցություն են գործում լարիի կուրսի եւ երկրի տնտեսական աճի վրա»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Վարչապետի խոսքերով, Վրաստանի էկոնոմիկան փոքր է, եւ այն սերտորեն կապված է միջազգային էկոնոմիկայի հետ: «Մենք գործում ենք մշակված ծրագրով: Այն, որ մեր կառավարությանը հաջողվեց անցյալ տարի ապահովել 5 տոկոսի տնտեսական աճ, մեծ ձեռքբերում էր: Դա առավել նկատելի էր այն պայմաններում, երբ առաջատար պետությունների տնտեսական աճը կազմեց ընդամենը 3 տոկոս: Մենք այս տարի էլ ծրագրում ենք տնտեսական զգալի աճ, թեպետ, կրկնում եմ, մեր էկոնոմիկան սերտորեն կապված է համաշխարհային էկոնոմիկայի հետ»,- հայտարարեց վարչապետը:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՄՈՏ

# ԿՄՇԱԿՎԻ ԲԱՐՁՐԱԼԵՌ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾ



(Սկիզբը՝ 1-ին էջում)

չապետ Իրակլի Ղարիբաշվիլին համապատասխան կառույցներին հանձնարարել է մինչեւ փետրվարի 20-ը մշակել ու ներկայացնել բարձրալեռ տարածաշրջանների վերաբերյալ օրինանախագծի վերջնական տարբերակը: Բարձրալեռ գյուղերից բնակչության արտագաղթի կանխման ու տեղերում տնտեսական զարգացման աջակցությանն ուղղված օրինանախագիծը գարնանային նստաշրջանի ընթացքում քննարկվելու եւ հաստատվելու է երկրի խորհրդարանի կողմից: Ինչպես հայտարարեց Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Թենգիզ Շերգիլաշվիլին, ինչպես օրենսդրական, այնպես էլ գործադիր իշխանության մոտ ծագել են որոշակի նկատառումներ: «Օրինանախագիծը մարտին կներկայացվի խորհրդարանի քննարկմանը, եւ այն կընդունվի ապրիլին»,- հայտարարեց պատգամավորը:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

# ՆՈԴԱՐ ԽԱԴՈՒՐԻ. «ԵՐԿՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆՈՒՄ Է ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

միջազգային շուկայում առկա միտումների հետ: «Ազգային բանկը որոշել է գործել առավել ակտիվ: Մեր կողմից վերջին ժամանակների ընթացքում բյուջեից լարիի կուրսի վրա ազդեցություն չի եղել: Մենք հնարավորինս անում ենք լարիի կուրսի ամրապնդման համար»,- հայտարարեց Նոդար Խադուրին:

Ազգային բանկի որոշմանն արձագանքեց նաեւ Վրաստանի խորհրդարանի ֆինանսաբյուջետային կոմիտեի նախագահ Նոդար էբոնիձեն: Նրա խոսքերով, լարիի կուրսի տատանումները պատճառ չեն դառնա երկրի տնտեսական աճի 5 տոկոսի նվազեցման: «Իմ կարծիքով, Ազգային բանկի առաջարկությունը, որ վերանայվելու է տնտեսական աճի 5 տոկոսը, վաղաժամ է, քանի որ այդ ցուցանիշին հասնելը հնարավոր է»,- հայտարարեց էբոնիձեն:

ԷԿՈՆՈՄԻԿԱ

# ՆՎԱԶԵՑՎՈՒՄ Է ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՑՈՒՑԱՆԻՇԸ

*Վրաստանի կառավարությունը նվազեցնում է 2015 թվականի համար կանխագծած տնտեսական աճի ցուցանիշը:*

Ինչպես փետրվարի 5-ին կայացած կառավարության նիստում հայտարարեց ֆինանսների նախարար Նոդար Խադուրին, ընթացիկ տարում տնտեսական աճը կհասցվի 4 տոկոսի: Նշենք, որ ֆինանսների նախարարությունը երկրի պետական բյուջեի ներկայացման ժամանակ կանխագծել էր 5 տոկոսի տնտեսական աճ: Անցյալ տարի այդ ցուցանիշը կազմել էր 4,7 տոկոս:

Նախարարի խոսքերով, իրենք ճշտել են կանխագծումների պարամետրերը, եւ այն, որ ողջ տարածաշրջանում նկատվում է ճահճացում, իսկ Վրաստանում տնտեսական աճ՝ արդեն իսկ ողջունելի է: Նշենք, որ ավելի վաղ, Համաշխարհային բանկը Վրաստանի 2015 թվականի տնտեսական աճի ցուցանիշը նվազեցրել էր 3,5 տոկոսով:

ԿՐԹԱԿԱՆ

# ԳՈՐԾՈՒՄ Է ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐԸ



*Թբիլիսիի Իլիայի համալսարանում հունվարի 31-ին տեղի ունեցավ մանկավարժների համալսարանական նախապատրաստության բակալավրի եւ մագիստրոսի ակադեմիական նոր ծրագրերի շնորհանդեսը:*

Ծրագրերը մշակվել են Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի եւ Իլիայի համալսարանի գիտնականների խմբերի կողմից:

Իլիայի համալսարանում տեղի ունեցած ուսումնական նոր ծրագրերի շնորհանդեսին ներկա էին Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն, Վրաստանում գործող համալսարանների եւ գիտական կենտրոնների ղեկավարները:

Շնորհանդեսին ներկայացվեց երկու ծրագիր. մագիստրոսի ծրագիր՝ բակալավրիատի ծրագրի լրացմամբ եւ տարեկան ծրագիր նրանց համար, ովքեր արդեն ունեն բարձրագույն կրթություն:

# ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ՝ ՎԵՑ ՏԱՐԵԿԱՆԻՑ



*Նոր ուսումնական տարվանից Վրաստանի դպրոցները կսկսեն ընդունել 6 տարին լրացած երեխաներին: Համապատասխան որոշումն ընդունվել է հոգեբանների եւ ծնողների հետ կրթության ու գիտության նախարարության ներկայացուցիչների հանդիպման արդյունքում:*

Վեճերը, թե քանի տարեկանից է նպատակահարմար երեխաներին դպրոց տալ, շարունակվում են արդեն մի քանի տարի: Կրթության նախարարության որոշման համաձայն, 2010 թվականից երեխաներին կարելի էր դպրոց ուղարկել 5 տարեկանից:

Այս նախաձեռնությունը դրական են գնահատել ծնողները՝ հաշվի առնելով Վրաստանի դպրոցների անցումը կրթության 12-ամյա համակարգի (2008 թվական): 2012 թվականին 5 եւ 6 տարեկան առաջին դասարանցիների քանակը գործնականում հավասարվել էր:

Հոգեբանների խոսքով, սխալ է ծնողների այն կարծիքը, թե կարդալ ու գրել իմացող երեխան արդեն պատրաստ է դպրոց հաճախել: Ուսումնական ծանրաբեռնվածության մեծանալու համեմատ, երեխան ավելի մեծ հոգեբանական ճնշում կզգա, ինչն ավելի սուր կդրսեւորվի բարձր դասարաններում:

Հինգամյա տարիքից երեխաներին դպրոց ընդունելու նախաձեռնությամբ 2010 թվականին հանդես էր եկել Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլին: 2012 թվականին երկրում կատարված իշխանափոխությունից հետո, որոշվել էր վերանայել այս հարցը:

2014 թվականին առաջին դասարան են ընդունել սոսկ այն երեխաներին, ովքեր ուսումնական տարվա սկզբին արդեն հասել են վեցամյա տարիքի, կամ ում վեց տարին լրացել է մինչեւ 2015 թվականի հունվարի 1-ը:

*ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ*



ՈՒԿՐԱԻՆԱ

## ՔԱՅԼԵՐ՝ ՀՐԱԴԱԴԱՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

*Ուկրաինայի նախագահ Պյոտր Պորոշենկոն, Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդի եւ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի հետ քննարկելով Դոնբասի իրադրության խաղաղ կարգավորման ուղիները, հանդես է եկել հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելու օգտին: Հանդիպման արդյունքում, որը տեւել է ավելի քան հինգ ժամ, «երեք ղեկավարները կոչ են արել անհապաղ դադարեցնել կրակը»:*

*«Կողմերը պաշտպանել են Դոնեցկի ու Լուգանսկի մարզերում հակամարտության խաղաղ կարգավորումը եւ հույս հայտնել, որ Ռուսաստանը շահագրգռված է դրանում»,- ասված է հաղորդագրության մեջ:*

*Կիեւում հանդիպման ավարտից հետո, Ֆրանսիայի եւ Գերմանիայի ղեկավարները ծրագրում են մեկնել Մոսկվա: Երեկ՝ փետրվարի 6-ին, Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը Կրեմլում ընդունել էր Անգելա Մերկելին եւ Ֆրանսուա Օլանդին՝ քննարկելու Ուկրաինայի խնդիրը:*

## ՅԱՆՈՒԿՈՎԻՉԸ ԶՐԿՎԵՑ ՆԱԽԱԳԱՀԻ ԿՈՉՈՒՄԻՑ

*Ուկրաինայի Գերագույն ռադան օրենք է ընդունել, որի համաձայն, Վիկտոր Յանուկովիչը զրկված է Ուկրաինայի նախագահի կոչումից: Համապատասխան օրինագծով հանդես է եկել Ուկրաինայի արմատական կուսակցության խմբակցությունը: Խորհրդարանի խոսնակ Վլադիմիր Գրոյսմանը Գերագույն ռադայի աշխատակազմին հանձնարարել է ուսումնասիրել այդ հարցը:*

*Հիշեցնենք, որ Վիկտոր Յանուկովիչն իշխանությունից փաստացի հեռացվել է Ուկրաինայի քաղաքական ճգնաժամի ընթացքում, իսկ 2014 թվականի փետրվարի 22-ին Գերագույն ռադան հայտարարել է, որ նա «ինքնամեկուսացել է սահմանադրական լիազորությունների կատարումից» եւ նշանակել պետության ղեկավարի արտահերթ ընտրություններ: 2014 թվականի մայիսի 25-ին Ուկրաինայի քաղաքացիները հանրապետության նոր նախագահ էին ընտրել Պյոտր Պորոշենկոյին:*

## ՎԵՐԱՑՎՈՒՄ Է ՆԵՐՔԻՆ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՎ ՄՈՒՏՔԸ

*Ուկրաինայի նախարարների կաբինետը որոշում է ընդունել 2015 թվականի մարտի 1-ից չեղյալ հայտարարել Ուկրաինայի տարածք Ռուսաստանի քաղաքացիների մուտքը ներքին անձնագրերով: Այդ օրվանից ռուսաստանցիների մուտքը հնարավոր է միայն արտասահմանյան անձնագիր ներկայացնելու դեպքում:*

*Ուկրաինայի կառավարության համապատասխան որոշումը փետրվարի 3-ին հրապարակվել է նախարարների կաբինետի կայքում:*

ԱՖՐԻԿԱ

## ԷԲՈԼԱՅԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

*Տարեսկզբից ի վեր, առաջին անգամ, Արեւմտյան Աֆրիկայում անցած շաբաթ էբոլա վիրուսի հարուցած հիվանդության դեպքերի աճ է նկատվել: Այդ մասին հաղորդել է Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը: Նրա տվյալներով, հունվարի 26-ից մինչեւ փետրվարի 1-ը գրանցվել է վտանգավոր հիվանդության 124 նոր դեպք՝ 80-ը Սիեռա Լեոնեում, 39-ը՝ Գվինեայում, 5-ը՝ Լիբերիայում:*

*Նշենք, որ մինչ այժմ ցուցանիշներն անշեղորեն նվազում էին, իսկ հունվարի 18-ից մինչեւ 25-ը Գվինեայում, Լիբերիայում եւ Սիեռա Լեոնեում հիվանդությունը նվազել էր մինչեւ վերջին յոթ ամսվա ընթացքում ամենացածր մակարդակ՝ 99 հիվանդացած:*

*ԱՀԿ-ի փետրվարի 1-ի տվյալների համաձայն, աշխարհում էբոլա տենդից մահացել է 8981 մարդ, վարակվել՝ 22 հազար 495-ը:*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

## ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԱԼՅԱՆՍԻ ՀԵՏ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հետ առնչվող հարցեր: ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը կրկին ընդգծեց Վրաստանի տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության աջակցությունը եւ նշեց, որ ալյանսը երբեք չի հաշտվի Մոսկվայի եւ Սուխումիի միջեւ, այսպես կոչված, դաշնակցային համաձայնության հետ: Ստոլտենբերգը ընդգծեց, որ ալյանսը բարձր է գնահատում պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումները, որոնք ուղղված են երկրի պաշտպանունակության եւ անվտանգության ամրապնդմանը:

Բրյուսելում Մինդիա Ջանելիձեն հանդիպում ունեցավ նաեւ Պենտագոնի ղեկավար Չաք Հեյգելի հետ: Հանդիպմանը քննարկել են ռազմական համագործակցությունը, ինչպես նաեւ Ուկրաինայի իրադրությունը եւ «Ռուսաստանի վրա գործադրվող ճնշումը»:

Հեյգելը շնորհակալություն է հայտնել Վրաստանին Աֆղանստանում եւ Իրաքում «Իսլամական պետության»



դեմ պայքարում ԱՄՆ-ին օգնելու համար:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

## ԹԱՄԱՐ ԲԵՐՈՒՉԱՇՎԻԼԻ. «ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ՉԵՆ ԴԱԴԱՐԵՑՎԻ»



***Վրաստանը չի դադարեցրել եւ չի պատրաստվում դադարեցնել առեւտրային ու տնտեսական կապերը Ռուսաստանի հետ: Այս մասին ԱՄՆ կատարած այցելության ժամանակ հայտարարեց Վրաստանի արտաքին գործերի նախարար Թամար Բերուչաշվիլին:***

«Այն, որ 2014 թվականի աշնանից հետո չեն եղել հանդիպումներ «Աբաշիձե-Կարասին» ֆորմատով, չի նշանակում, որ Վրաստանը դադարեցրել է կամ կդադարեցնի առեւտրատնտեսական հարաբերությունները Ռուսաստանի հետ: Այդ հարաբերությունները չեն դադարեցվել»,- հայտարարեց նա:

Թամար Բերուչաշվիլին ընդգծեց, որ Վրաստանը չի հրաժարվել Ռուսաստանի հետ երկխոսությունից՝ «Աբաշիձե-Կարասին» ձեւաչափով, որը հաջողությամբ աշխատում է ավելի քան 2 տարի եւ ունի հստակ արդյունքներ:

## ՔՆՆԱՐԿՎԵՑ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՐՑԸ

***Վրաստանի օմբուդսմենին առընթեր ազգային փոքրամասնությունների խորհրդի նախաձեռնությամբ, «Վրաստանի ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվի պահպանության եւ ուսուցման վիճակի» թեմայով անցկացվեց աշխատանքային հանդիպում, որին ներկա էին պետական գերատեսչությունների, ազգային փոքրամասնությունների խորհրդի եւ ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ:***

Հանդիպմանը ելույթ ունեցավ օմբուդսմեն Ուչա Նանուաշվիլին, որը խոսեց փոքրամասնությունների ազգային լեզվի ուսուցման հետ կապված խնդիրների, առկա մարտահրավերների եւ դրանց հաղթահարման ուղիների մասին:

Վրաստանի կրթության եւ գիտության փոխնախարար Լիա Գիգաուրին ներկայացրեց ազգային փոքրամասնությունների զարգացման քաղաքականության փաստաթուղթը եւ խոսեց առկա հիմնախնդիրների կարգավորման ուղիների մասին:



Հանդիպման ընթացքում ներկայացվեցին գործողությունների առաջիկա ծրագրի մշակման հետ առնչվող հարցեր:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

## ՎԱՈՒՉԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ ԿՐԿՆԱՊԱՏԿՎՈՒՄ Է



***Թբիլիսիում սոցիալապես անպաշտպան ընտանիքների համար առաջարկված կոմունալ վաուչերների գումարը կրկնապատկվում է: Այդ մասին հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիան:***

«2014 թվականին բյուջեից սոցիալապես անպաշտպան ընտանիքների կոմունալ նպաստների համար հատկացվել էր ընդհանուր առմամբ 9,5 միլիոն լարի: Ինչպես մենք խոստացել ենք մեր ընտրողներին, 2015 թվականին բյուջեից այդ նպատակի համար կծախսվի կրկնակի ավելի գումար՝ 19 միլիոն լարի: Այսպիսով, այդ կապակցությամբ հնչող տարբեր բնույթի հայտարարությունները անհիմն են: Ցանկանում եմ հասարակայնությանը հավաստել, որ մենք մեր խոստումները կկատարենք»,- հայտարարեց Դավիթ Նարմանիան:

## 1000 ԼԱՐԻ՝ 100-ԻՑ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ԵՐԿԱՐԱԿՅԱՑՆԵՐԻՆ

***Թբիլիսիի 100 եւ ավելի բարձր տարիքի բնակիչները, առողջապահության եւ սոցիալական սպասարկման քաղաքային ծառայության ծրագրի շրջանակներում, կստանան հազարական լարիի (շուրջ 500 դոլարի) չափով միանվագ օգնություն:***

Այդ մասին հաղորդել է Թբիլիսիի քաղաքապետարանի մամուլի ծառայությունը:

Ծրագրի իրագործման համար Թբիլիսիի բյուջեից տրամադրվել է 35 հազար լարի:

Առողջապահության եւ սոցիալական սպասարկման քաղաքային ծառայության 2015 թվականի բյուջեն կազմել է 76,5 միլիոն լարի: Ընթացիկ տարում ծառայությունը կիրականացնի 29 ծրագիր:

ՔՐԵԱԿԱՆ

## ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ԶՈՒՐԱԲ ՎԱԶԱԳԱՇՎԻԼՈՒ ԳՈՐԾԸ

***Վրաստանի գլխավոր դատախազությունը հանդես է եկել հայտարարությամբ, ըստ որի, բացահայտվել է Զուրաբ Վազագաշվիլու սպանության եւ Թբիլիսիի թենիսի խաղահրապարակի մոտ իրականացված հատուկ գործողության քրեական գործը:***

Հայտարարության մեջ նշված է, որ քրեական գործի կրկնական հետաքննության ընթացքում հարցաքննվել է 150 վկա, որից մեկը օտարերկրացի է: Հետաքննությանը ներգրավվել է 10 փորձագետ: Հաստատվել է Զուրաբ Վազագաշվիլու եւ Ալեքսանդր Խուբուլովի սպանության պատճառը:

Կանխամտածված սպանության մեղադրանքով ձերբակալվել է 11 մարդ, այդ թվում՝ քրեական ոստիկանության պետի տեղակալ Իրակլի Փիրցխալավան, որը մեղադրվում է սպանության կազմակերպման եւ ապա՝ նյութական ապացույցները թաքցնելու ու մարդկանց ապօրինի ազատազրկման մեջ:

Գլխավոր դատախազության հայտարարության մեջ նշված է, որ Խուբուլովի, Վազագաշվիլու եւ մյուսների մեքենայի վրա կրակ բացելու հրամանը տվել է Իրակլի Փիրցխալավան:

Նշենք, որ հունվարի 20-ին, Զուրաբ Վազագաշվիլու շիրիմին տեղակայված նռնակի պայթյունի արդյունքում, զոհվեց վերջինիս հայրը՝ Յուրի Վազագաշվիլին, որի ջանքերով էլ դատախազությանը ապացույցներ էր ներկայացվել որդու եւ մյուս երիտասարդների սպանության գործի վերաբերյալ:

Հատկանշական է, որ «Ռուսթավի-2» հեռուստաընկերությանը տրված հարցազրույցում Լեւան Գաբունիան պնդում էր, որ Զուրաբ Վազագաշվիլին սպանել է Բեքա Պապուաշվիլուն եւ իր որդուն՝ Գիորգի Գաբունիային, որը սպանության ականատեսն է եղել: Նրա խոսքերով, Յուրի Վազագաշվիլին այն ժամանակ որդուն փրկեց ձերբակալությունից՝ Վակե-Սաբուրթալոյի շրջանի դատախազին վճարելով 70 հազար դոլար: Լեւան Գաբունիայի խոսքերով, Յուրի Վազագաշվիլին եւ նրա որդին՝ Զուրաբ Վազագաշվիլին, քրեականներ էին, ընդ որում՝ Վազագաշվիլի ավագը զբաղվում էր թմրանյութերի իրացմամբ: «Ողջ Թբիլիսին գիտեր, որ Յուրի Վազագաշվիլին «Ջազում» վաճառում էր թմրանյութեր: Նա համարվում էր Վրաստան «Սուբոտեքսի» առաջին մատակարարը»,- հայտարարեց Լեւան Գաբունիան:



### ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱՐՈՒ ԶԱՎԱԿ ԾՆՎԵՑ

*Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ նրա կինը՝ Մակա Չիչուան, որդի են ունեցել:*

*Նորածնի քաշը 3,6 կիլոգրամ է, հասակը՝ 51 սանտիմետր: Տղային կոչել են պապի անունով՝ Թեյմուրազ:*

*Հաղորդվում է, որ ծննդաբերությունը տեղի է ունեցել կեսարյան հատումով:*

### ԲԱՑՎԵՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

*Փետրվարի 3-ին, բյուրոյի նիստի անցկացմամբ, մեկնարկեց Վրաստանի խորհրդարանի գարնանային նստաշրջանը: Բյուրոյի նիստում համաձայնեցվեցին այն հարցերն ու օրինանախագծերը, որոնք քննարկվելու են առաջիկա նիստերին: Նստաշրջանի օրակարգում դրված է նաեւ Գերագույն դատարանի նախագահի պաշտոնի թեկնածուի առաջադրման ու երկրի նախագահի ամենամյա ելույթի ձեւաչափի հարցը:*

### ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ԹԻՎԸ ՆՎԱԶԵԼ Է

*2015 թվականի հունվարին Հայաստանի 67 հազար 351 քաղաքացի է այցելել Վրաստան: Այդ մասին փետրվարի 3-ին հաղորդել է Վրաստանի ՆԳ նախարարության տեղեկատվական-վերլուծական դեպարտամենտը: Իսկ ընդամենը նշված ժամանակահատվածում Վրաստան է այցելել 309 հազար 467 օտարերկրացի, ինչը 3 տոկոսով պակաս է անցյալ տարվա համապատասխան ցուցանիշից:*

*Հունվարին Եվրամիության երկրներից Վրաստան է այցելել 7 հազար 576 մարդ, Ուկրաինայից՝ 7 հազար 350 քաղաքացի:*

### ԿՐՃԱՏՎԵԼ Է ԱԽԱԼՑԻԽԵԻ ՌԱԲԱԹ ԱՄՐՈՑԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

*2015 թվականին գրեթե կիսով չափ կրճատվել է Ախալցիխեում տեղակայված Ռաբաթ պատմական ամրոց-հուշարձանի ֆինանսավորումը: Նախկինում նախատեսված 400 հազարի դիմաց այս տարի ֆինանսավորումը կկազմի 200 հազար լարի, ինչը կհանգեցնի դիտումների համար տոմսերի սակագնի բարձրացման: Միաժամանակ, ամրոց-հուշարձանի վարչությունը դադարեցրել է 13 աշխատակցի հետ աշխատանքային պայմանագրի գործունեությունը:*

### ՏԵԽՍՏՈՒԳՈՒՄԸ ՀԵՏԱՁԳՎՈՒՄ Է ԵՐԿՈՒ ՏԱՐՈՎ

*Վրաստանի կառավարությունը խորհրդարանի հաստատմանն է ներկայացրել ավտոմեքենաների պարտադիր տեխստուգումն երկու տարով հետաձգելու մասին օրինանախագիծը: Այն օրենսդիր մարմնում քննարկվելու է արագացված կարգով:*

*«Ճանապարհային երթեւեկության մասին» դեռեւս գործող օրենքի համաձայն, Վրաստանում գործող ավտոտրանսպորտային միջոցների պարտադիր տեխստուգման մասին օրենքը ուժի մեջ էր մտնելու ընթացիկ տարվա մարտի 1-ից, թեպետ, խորհրդարանի ներկայացված նոր օրինանախագծից ելնելով, այդ ժամկետը հետաձգվում է մինչեւ 2017 թվականի դեկտեմբերի 31-ը:*

*Ավտոտրանսպորտի տեխնիկական վիճակի սահմանման նպատակով, ուղեւորության համար պարտադիր թեստավորումն անցնելու է միայն ավտոտրանսպորտի այն միջոցները, որոնք պարբերաբար իրականացնում են տեղական քաղաքային ուղեւորափոխադրումներ, միջազգային ուղեւորափոխադրումներ, վտանգավոր բեռների փոխադրումներ, երեք եւ ավելի տոննա բեռի փոխադրումներ: Ավտոտրանսպորտային մյուս տեսակների տեխստուգման անցկացումը կրում է կամավոր բնույթ:*

ՈԼՈՐՏ

# ՀԱՏՈՒԿ ՀԱՐԿ` ՉՄՇԱԿՎԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

***Վրաստանի էկոնոմիկայի նախարարությունը ձեռնամուխ է եղել նոր օրինանախագծի մշակմանը, ըստ որի, չմշակված հողատարածքների համար կսահմանվեն հատուկ հարկեր, թեպետ վերոնշյալ օրինանախագիծն ընդունվելու դեպքում անգամ, մինչեւ 2016 թվականը այն չի կիրարկվի:***

Չմշակված հողատարածքների համար հատուկ հարկի սահմանումը հասարակայնությունում լայն արձագանք առաջացրեց: Մարդկանց մի մասը գտնում է, որ հողը գտնվում է քաղաքացիների սեփականության ներքո, եւ նրանք կարող են որոշել` այն մշակե՞լ, թե՞ ոչ: Մյուս մասի կարծիքով, անմշակ հողատարածքների հարցը պետությունն առնչում է պարենային անվտանգության հետ, ուստիեւ քայլեր է ձեռնարկում հարցի կարգավորման ուղղությամբ, միաժամանակ, հողերի մշակման հանգամանքն ընկալվում է որպես գյուղատնտեսության զարգացման նախադրյալ:



Գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիա

Ինչ վերաբերում է վերոնշյալ թեմայի շուրջ պետական կառույցների դիրքորոշմանը, ապա նա հանգում է հետեւյալին. եթե գյուղացին չի մշակում իր սեփականության ներքո գտնվող հողատարածքը, ապա նա այն պետք է վարձակալությամբ կամ այլ տարբերակով հանձնի գյուղատնտեսական կոոպերատիվին: Իսկ թե որքանով է արդարացված ներկայումս գործող կոոպերատիվների գործունեությունը, դա երկրորդ հարցն է:

«Մարդիկ, ովքեր չեն մշակում հողը, բերք չեն աճեցնում, չպետք է նույն պայմաններից եւ իրավունքներից օգտվեն, որոնք վերապահված են այն մարդկանց, ովքեր մշակում են, բերք աճեցնում, հողատարածքի վրա իրականացնում բոլոր անհրաժեշտ միջոցառումները: Մենք ակտիվ գործունեություն ենք ծավալել էկոնոմիկայի նախարարության տնտեսական խորհրդի շրջանակներում եւ լրջորեն քննարկում ենք հարկային առումով գյուղատնտեսական նշանակության վարելահողերի չօգտագործման կամ չմշակման դեպքում հարկերի ավելացման հարցը»,- հայտարարեց գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիան: Կոնկրետ ինչ տեսքով եւ ինչ չափով հարկեր կսահմանվեն հողի մշակումն անտեսած սեփականատերերին, դեռեւս հայտնի չէ: Ինչպես տեղեկացրին էկոնոմիկայի նախարարությունից, օրինանախագիծը մշակման փուլում է, ուստիեւ մանրամասների մասին խոսելը վաղաժամ է:

Հիշեցնենք, որ չմշակված հողատարածքների համար հատուկ հարկի սահմանման հարցը օրակարգում դրվեց «Վրացական երազանքի» իշխանության գլուխ գալու օրից: Այն ժամանակ Վրաստանի խորհրդարանի ագրարային հարցերի կոմիտեի նախագահ Գիգլա Ագուլաշվիլին հայտարարեց, թե չի բացառում, որ չմշակված հողատարածքների համար հարկեր սահմանվեն մինչեւ 5 հեկտար հողամասի սեփականատերերին: «Հաճախ են լինում տարածաշրջաններում ու տեսնում, որ մասնավոր սեփականության ներքո հողատարածքների նշանակալի մասը տարիներ շարունակ մնում է անմշակ: Բնականաբար, դա չի կարող համապատասխանել երկրի ու ժողովրդի շահերին, ուստիեւ առաջարկում ենք. եթե առաջին տարում հողը մնում է անմշակ, կարելի է խուսափել լրացուցիչ հարկադրումից, թեպետ երկրորդ, երրորդ, չորրորդ եւ հաջորդ տարիների համար չմշակված հողատարածքները պետք է հարկադրվեն մշակված հողերի համար սահմանված հարկային սակագներով»,- այն ժամանակ հայտարարեց Գիգլա Ագուլաշվիլին:

Գյուղատնտեսական հարցերով փորձագետ Պաատա Կողուաշվիլին գտնում է, որ չմշակված հողատարածքների համար առանց բացառության, այդ թվում` նաեւ սակավահող տնտեսությունների սեփականատերերին լրացուցիչ հարկի սահմանումը ողջունելի որոշում է, քանի որ Վրաստանը սակավահող երկիր է, եւ յուրաքանչյուր հեկտարը մեծ նշանակություն ունի:

«Նման պրակտիկա կիրարկվում է աշխարհի շատ երկրներում, մասնավորապես` ԱՄՆ-ում: Օրինակ, Աբրահամ Լինքոլնի նախագահության օրոք, երբ անցկացվեց հողի բարեփոխում, քաղաքացիներին անվճար հանձնվում էր 160 ակր հողատարածք այն պայմանով, որ նրանք հինգ տարվա ընթացքում պետք է հիմնեն ֆերմա: Եթե որեւէ մեկը չէր հասցնում այդ ժամանակահատվածում իրականացնել հողի մշակումը, ապա պետությունը տվյալ հողատարածքն առգրավում էր: Երբ 1992 թվականին Վրաստանում սկսեցինք իրականացնել հողի բարեփոխումը, օրենքում նշվեց, որ, եթե հողատերը երկու տարվա ընթացքում հողամասը չի մշակում, նրա նկատմամբ կսահմանվեն պատժամիջոցներ, հնարավոր է նաեւ հողի առգրավում»,- ասաց փորձագետը եւ հավելեց, որ օրենքի վերոնշյալ հոդվածը ուժի մեջ է մինչեւ 1995 թվականը:

Հիշեցնենք, որ ներկա դրությամբ, մինչեւ 5 հեկտար հողատարածք ունեցող տնտեսությունները ազատված են հարկերից: Կախված շրջաններից` 5 հեկտարից ավելի հողատարածք ունեցող տնտեսությունները հարկադրված են: Վրաստանում մեկ հեկտարի հաշվով հողահարկը միջին հաշվով կազմում է 79 լարի: Հիշեցնենք նաեւ, որ 2012 թվականի փետրվարին կառավարության կողմից ընդունված որոշմամբ, հողերի դասակարգումը վերացվել էր, եւ բերրի ու ոչ բերրի հողատարածքները հարկադրվում էր միեւնույն հարկով: Օրինակ, 2012 թվականին մեկ հեկտար հողամասի համար Կախեթիում, 63 լարիի փոխարեն, սահմանվեց 79 լարիի հողահարկ: Ելնելով երեք տարի առաջ սահմանված հողահարկի սակագներից` ամենաբարձր սակագինը` 95 լարի, սահմանվել էր Բոլնիսիի, Գարդաբանիի մունիցիպալիտետների ու Թբիլիսիի արվարձանների բնակիչների համար, իսկ ամենացածր հողահարկը` 56 լարի, սահմանված էր Շուախեւիի, Խարագաուլիի, Ճիաթուրայի, Լենտեխիի, Օնիի, Չոխատաուրիի, Մեստիայի, Ստեփանծմինդայի եւ Ջավայի բնակիչների համար:

Ի լրացում վերոնշյալի, նշեմ, որ Վրաստանի խորհրդարանի ագրարային կոմիտեն փետրվարի 2-ին ձեռնամուխ եղավ գյուղատնտեսական նշանակության հողերի մշակման եւ դրա հետ կապված հիմնախնդիրների հարցի քննարկմանը: Կոմիտեի նիստին ներկա էին Վրաստանի գյուղատնտեսության եւ էկոնոմիկայի նախարարությունների ներկայացուցիչները, գիտնականներ, փորձագետներ ու ֆերմերներ:



Խորհրդարանի ագրարային կոմիտեի նախագահ Գիգլա Ագուլաշվիլի

Ագրարային կոմիտեի նախագահ Գիգլա Ագուլաշվիլու հայտարարությամբ, ներկա դրությամբ մասնավոր սեփականության ներքո գտնվող 578281 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողերի շուրջ 250 հազար հեկտարը մնում է անմշակ: Նրա խոսքերով, մշակվում է միայն գյուղատնտեսական նշանակության հողերի 55-60 տոկոսը:

*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

# 484 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇՆՈՐՀՎԵԼ Է ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

***Վրաստանի գյուղատնտեսության նախարարության տեղեկավատության համաձայն, 2014 թվականին Վրաստանում 484 գյուղատնտեսական միավորումների, որոնցում միավորվել է 3553 փայատեր, շնորհվել է կոոպերատիվի կարգավիճակ:***



Դրանցից 99-ը գտնվում են բարձրալեռ երկրամասերում: Տեղեկատվության համաձայն, կոոպերատիվներին փոխանցվել է մոտոբլոկների 170 կոմպլեկտ եւ լրացուցիչ 120 տնկարկիչ: Հարեւանության եվրոպական քաղաքականության շրջանակներում, գյուղատնտեսության եւ գյուղի զարգացման ծրագրով (ENPARD) նախատեսված մրցույթի հիման վրա կընտրվեն 160 կոոպերատիվներ, որոնք դրամաշնորհի տեսքով օգնություն կստանան:

Նշենք, որ 2014 թվականի հունվարի 27-ից գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման գործակալությունը ձեռնամուխ եղավ գյուղատնտեսական միավորումների կոոպերատիվի կարգավիճակի շնորհման ընթացակարգին: Բարձրալեռ շրջաններում կոոպերատիվի ստեղծման համար պահանջվում է երեք ֆերմերի մասնակցություն, իսկ ցածրավայրերում` հինգ:

«Գյուղատնտեսական կոոպերատիվի կարգավիճակի ստացման հավակնորդները պետք է համապատասխան փաստաթղթերով դիմեն գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման գործակալությանը: Նրանք ներկայացնում են իրավասությունը հաստատող փաստաթուղթը եւ գյուղատնտեսական կոոպերատիվի կանոնադրությունը: Գործակալությունը, իր հերթին, մշակել է կոոպերատիվների կանոնադրության ձեւաթղթի մշակումը, ինչը ֆերմերների համար դյուրացնում է կարգավիճակի ստացման գործը:

Ինչպես նշեցին գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման գործակալությունում, կոոպերատիվների նպատակն է հիմնել գյուղական վայրերում նոր աշխատատեղեր, ներդնել նոր տեխնոլոգիաներ, նպաստել գյուղատնտեսական արտադրության եւ արտահանման ներուժի զարգացմանը: Կոոպերատիվում միավորված ֆերմերները, անկախ ձեռներեցի կարգավիճակից, պետությունից ստանում են դրամաշնորհ, որը չի հարկադրվում:

ԿՈՄՈՒՆԱԼ

# ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՍԱԿԱԳՆԵՐՆ ԱՃՈ՞ՒՄ ԵՆ

***Ինչպես հայտնել են «Ղազտրանսգազ-Թբիլիսի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից, մարտի 1-ից Թբիլիսիում իրավական անձանց համար բնական գազը կթանկանա եւ, ներկայիս 0,75-ի դիմաց, կկազմի 0,9 լարի (շուրջ 0,45 դոլար)` մեկ խորանարդ մետրի դիմաց: Տեղեկատվության համաձայն, սակագնի բարձրացումը կապված է դոլարի նկատմամբ լարիի փոխարժեքի զգալի փոփոխման հետ: Ֆիզիկական անձանց համար բնական գազի սակագնի բարձրացում չի սպասվում:***



Միաժամանակ, «Ղազտրանսգազ-Թբիլիսի» ընկերությունը սպառողներին տեղեկացնում է, որ մինչեւ փետրվարի 7-ը կնքեն նոր պայմանագիր, հակառակ դեպքում, ընկերությունը սպառնում է դադարեցնել գազի մատակարարումը:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին փետրվարի 5-ին փոխվարչապետերին հանձնարարել է բանակցություններ սկսել Ադրբեջանի SOCAR նավթի-գազի ընկերության հետ` խուսափելու երկրում բնական գազի սակագների բարձրացումից:

«Կարծում եմ, որ մենք պետք է ուղիներ գտնենք` գազի գնի բարձրացումից խուսափելու համար, համենայնդեպս, թեկուզեւ այս փուլում: Մենք հանդիպումներ ենք ունեցել SOCAR-ի ներկայացուցիչների հետ: Նրանք միանգամայն պատրաստ են այս թեմայի շուրջ բանակցություններ վարելուն, ուստի, ես ցանկանում եմ մեկ անգամ եւս կոչ անել երկու փոխվարչապետերին` Տնտեսական խորհրդի հետ մեկտեղ, որն այդ գործընթացի մեջ կներգրավվի իմ անունից, ամենակարճ ժամկետում լուծել այդ հարցը»,- կառավարության նիստում հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Վրաստանի հացամթերքների արտադրողների ասոցիացիայի նախագահ Մալխազ Դոլիձեն, իրավաբանական անձանց համար բնական գազի սակագնի ավելացման պայմաններում, չի բացառում հացի թանկացման հնարավորությունը: Նրա խոսքերով, հացի գինը, նախնական հաշվումներով, կկազմի 0,9-1 լարի: Նրա հետ համաձայն չէ Վրաստանի գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիան: Նախարարի խոսքերով, գազի սակագնի ավելացումը ոչ մի ազդեցություն չի գործի առանձին մթերքների, մասնավորապես` հացի գնի վրա:

Վրաստանի էներգետիկայի փոխնախարար Մարիամ Վալիշվիլու հայտարարությամբ, առանձին արտադրատեսակների գների վրա բնական գազի սակագնի ավելացումը, իրոք, ազդեցություն կգործեի, թեպետ, փոխնախարարի հավաստմամբ, դա հացի արտադրական գործընթացի վրա ոչ մի ազդեցություն չի գործի: «Ինչ վերաբերում է հացի գործարաններին, ապա դրանք միշտ ունեցել են արտոնյալ գներ, այսինքն` նրանց սակագները նկատելիորեն տարբերվում էին կոմերցիոն մյուս օբյեկտների համար սահմանված սակագներից: Որքանով տեղեկացված եմ, վերոնշյալ ընկերությունների համար սույն արտոնությունը կպահպանվի»,- հայտարարեց Մարիամ Վալիշվիլին:

Վրաստանի էներգետիկայի նախարարությունում նաեւ նշեցին, որ համաձայնություն է ձեռք բերվել, որ բնական գազի գների վերանայումը չի վերաբերի հացի գործարաններին:

Հիշեցնենք, որ ներկայումս սովորական սպառողի համար Թբիլիսիում բնական գազի սակագինը կազմում է 0,4562 լարի (շուրջ 0,23 դոլար)` մեկ խորանարդ մետրի դիմաց: Ադրբեջանն ապահովում է Վրաստանի կողմից սպառվող գազի ավելի քան 80 տոկոսը:

*ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ*